

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ սահմանել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման Սակագները:

1. Առաջարկվող մանրածախ ջրամատակարարման ծառայության մատուցման Սակագինը՝ 127 դրամ 50 լումա՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 153 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Առաջարկվող ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման Սակագինը՝ 22 դրամ 50 լումա՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 27 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
3. Առաջարկվող մեծածախ ջրամատակարարման ծառայության մատուցման Սակագինը՝ 30 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 36 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
4. Առաջարկվող մեծածախ ջրահեռացման ծառայության մատուցման Սակագինը՝ 15 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացվող ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 18 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
5. Առաջարկվող Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի ստորգետնյա ջրերի հեռացման Սակագինը՝ 9 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացվող ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 10.8 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Հավաստում եմ, որ իմ կողմից ներկայացված հայտը պարունակում է ստույգ տեղեկատվություն և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր ու հաշվարկներ:



10-45

Դիմումին կցվում են՝

1. Սակագների սահմանման դիմումի վերաբերյալ հայտարարությունը ներառող «Հայաստանի Հանրապետություն» և «Հայկական ժամանակ» օրաթերթերի երկուական օրինակները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) հայտարարության տպագրման համարը՝ 224375:

2. ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 27-ի արձանագրային որոշմամբ (կցվում է) հավանության արժանացած և Կողմերի միջև կնքված՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրում ներառված Գնային առաջարկի ձևի (1 էջ), կանխատեսվող ջրառի, սպառողներին մատակարարվող խմելու ջրի, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծավալների (1 էջ) և ակնկալվող եկամուտների վերաբերյալ (1 էջ) տեղեկատվությունների երկուական օրինակները:

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0025, Աբովյան 66^ա

Հեռախոս՝ (+374 10) 56-93-94

Էլեկտրոնային փոստ՝ office@yerevandjur.am

Իրավաբանական անձի ծածկագիրը (կողը)՝ 50221657

Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 273.120.934743, Վկայական N03Ա1084743

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02655115

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ Կրիստիան Լըֆե

25.11.2016թ.

